ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 282-Ա 15 մայիսի 2026 թ.

ՍՈՒՍԱՆՆԱ ՔԵՇԻՇՅԱՆԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿԻ N 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 13-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի 181-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 37.1-րդ, 37.2-րդ, 39-րդ կետերի պահանջներն ու Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 14-ի 1653-Ա հրամանով ձևավորված մասնագիտական հանձնաժողովի 2026 թվականի մայիսի 6-ի N 715 արձանագրությունը (2026 թվականի մայիսի 12-ի Ն/1565-2026), ինչպես նաև Սուսաննա Քեշիշյանի անձնական դիմումը

որոշում եմ՝

1. Սուսաննա Քեշիշյանին 2026 թվականի մայիսի 18-ից նշանակել «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակի N 1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն և նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր 5 տարի ժամկետով (18.05.2026-18.05.2031թթ.):

2. Փորձաշրջանի ղեկավար նշանակել «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակի ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արմինե Մկրտչյանին:

3. Փորձաշրջանի ղեկավար Արմինե Մկրտչյանին՝ առաջնորդվել կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի 181-Ն որոշմամբ հաստատված հավելվածի պահանջներով:

15.05.2026

ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ՋԱՆԻԿ ԲԱԶԵՅԱՆ

BAZEYAN JANIK 2208850319

Ջ. ԲԱԶԵՅԱՆ
Ք. Գավառ